

# ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՅԹԸ

(Քարտած «Խորհրդ. Հայաստան»-էն - 1934)

ԳՊՐՈՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ. — Լուս-  
ժողովմատի տուեալներով իր ցանցում  
1920-1921 ուսումնական տարում եղել  
է 493 Տարրական դպրոց՝ 45,815 աշա-  
կերտներով, 13 Միջնակարգ դպրոց՝ 1647  
ուսանողով. մէկ Պետհամալսարան՝ 40 ու-  
սանողով:

Իսկ 1933-1934 ուսումնական տարում  
եղել է 748 Տարրական դպրոց՝ 82,963  
աշակերտով. 327 Թերմիջնակարգ դպրոց՝  
100,582 աշակերտներով, 45 Միջնա-  
կարգ (տասնամեայ) դպրոց՝ 22,240 ու-  
սանողով, 16 Մանկավարժական տէխնի-  
կում՝ 1891 ուսանողով և մէկ Պետհա-  
մալսարան՝ 625 ուսանողով: (Թ. 216  
[4215]):

ԽՈՐՀՐԴՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ. — Ե-  
րեւանում կան՝ Կարմրադրօշ առաջին թա-  
տրոնը, Պետոպերան, Պատանի հանդիսա-  
տեսի թատրոնը, Բանուորական թատրոնը,  
Հայաստանի թուրքական թատրոնը, հիմք  
է դրում բրդական թատրոնի. ունինք  
Պետթատրոն Լենինականում: Կան թա-  
տրոններ շրջաններում: Կայ ժողովրդա-  
կան արտիստ Համօ Խարազեանի թատրո-  
նը, կան Ղամարլուի, Ստեփանաւանի,  
Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Վաղապատի,  
Աւանի վերջու և այլ շրջանների թատրոն-  
ները: (Թ. 276 [4275]):

ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆ ՕՊԵՐԱ. — Յուլիսի 20-ին  
փակուեց Պետոպերայի 1933-1934 թուի  
սեզոնը. այդ ժամանակամիջոցում ներ-  
կայացուել է 8 օպերա՝ 138 անգամ, որից  
«Կարմէն»ը 25 անգամ, «Ալմաստ»ը՝ 22,  
«Չիօ - չիօ - սան»ը՝ 14, «Եզգենիյ Օնե-  
զին»ը՝ 16, «Սեւիլիայի սափրիչ»ը՝ 17,  
«Պաուստ»ը՝ 16, «Ռիկուէտոյ» 19,  
«Պայպցներ»ը՝ 9:

Գալիք քառերաչրջակի նոր ցանկում նա-  
խապատրաստում են բացի այս տարիներ-  
կայացուած 8 օպերայից՝ նաեւ ինքնուրոյն  
հայկական օպերաներ՝ «Քաջ Նազար»ը,  
«Անուշ»ը, մէկ ռուսական օպերա «Թա-  
գաւորական հարսը»: (Թ. 172 [4171]):  
Փակուեց Հ. Ս. Խ. Հ. 2րդ Պետական թա-  
տրոնի 1933-1934 թատերաշրջանը. այս  
թատերաշրջանում թատրոնը ձեռք է բե-  
րել մեծ նուաճումներ «Մեծապատի մու-  
րացկաններ»ի և «Սէր և խարդաւանանք»ի  
բեմադրութեան շնորհիւ: Թատրոնը տուել  
է 156 ներկայացում: (Թ. 174 [4173]):

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱ-  
ՐԱՆԻ ԲՈՂՈՐ 15 հատորների բառաշարքը  
(70,000) լրիւ պատրաստ է. իւրաքան-  
չիւր հատորն ունենալու է 70 տպագրա-  
կան մամուլ. լինելու է պատկերազարդ,  
և ունենալու է գունաւոր ու սեւ բազմա-  
թիւ քարտէզներ:

Նախատեսուած է այս տարի լոյս ըն-  
ծայել Ա. հատորը, որն արդէն տպագրու-  
թեան է յանձնուած. իսկ 1935 թ. ըն-  
թացքում Բ., Գ., և Դ. հատորները:

«Ա.» տառով սկսուող յօդուածների  
նկարներն ու քարտէզները (105 հաւ)  
արդէն պատրաստ են:

Հանրագիտարանի գունաւոր քարտէզ-  
ների տպագրութիւնը և պատրաստումը  
գլխաւորապէս կատարում է Մոսկուա-  
յում. իսկ մի մասինն էլ՝ Հայաստանի  
շրջանների գունաւոր քարտէզների տպա-  
գրութիւնը կատարում է Երեւանում: (Թ.  
215 [4214]):

ԵՐԻՏԱՍՍՐԴ ԱՐՈՒՆԵՍԱԳԷՏՆԵՐԻ ՈՒՄ-  
ՊԻՍԴ. — Հայաստանի կոմերիտմիու-  
թեան 15 ամեայ յօրեկեանի կապակցու-

թեամբ կազմակերպուած երիտասարդ ա-  
րուեստագէտների հանրապետական ոլիմ-  
պիադը, որ տեւեց մայիսի 15-ից մինչեւ  
21-ը, ցոյց տուեց, որ մեր երկրի տնտե-  
սական - քաղաքական վերելքին զուգըն-  
թաց, հսկայական չափով աճել է մաս-  
սաների ունակութիւնների զրահւումը՝  
արուեստի բոլոր ճիւղերում...

Ոլիմպիադին մասնակցում էին աւելի  
քան 250 մարդ, որից 60 հոգի շրջան-  
ներից:

Թատրոններից մասնակցում էին՝ Կար-  
մրադրօշ Առաջին Պետթատրոնի, Հ. Ա.  
Մ. Խ. Ի բանուորական թատրոնի երիտա-  
սարգները և Երեւանի Պատանի հանդիսա-  
տեսի թատրոնը:

Երիտասարդական բեմադրութիւնները  
ցոյց տուին, որ մեզ մօտ առաջ են եկել  
թատրոնական երիտասարդ, կարող և ըն-  
դունակ ուժեր, որոնց հարկաւոր է հա-  
մարձակ կերպով օգտագործել... Վ. Արիս-  
տակէսեանի ազգագրական պարերի աւ-  
րոյնարիւնը, ինչպէս միշտ, այնպէս էլ  
այս անգամ՝ շատ յաջող էր, որի համար  
պարգեւատրուեց առաջին մրցանակով:  
Դժբախտաբար նոյնը չէ կարելի ասել նրա  
անհատական պարերի մասին: Չնայած  
պարողների շնորհքին, անյաջող և սխալ  
պէտք է համարել Արիստակէսեանի մօ-  
տեցումը հայկական և ատրեքշանեան ան-  
հատական պարերին («Դիլիջան» եւն),  
որոնց տրուած է հարեմային բնոյթ:

Երաժշտութեան գծով մասնակցում էին  
մօտ 100 մարդ՝ ջութակ, դաշնամուր,  
խմբերգ, մեներգ, արեւելեան գործիքներ  
եւն...

Ոլիմպիադին իրենց նկարներով մաս-  
նակցում էին մօտ 35 երիտարարդ կերպ-  
արուեստագէտներ: Թեմատիկայի տեսա-  
կէտից կերպարուեստագէտները կարծէք  
որպէս բացառութիւն, գրեթէ ամբողջովին  
այժմէական էին: (Վ. Հացագործեան) (Թ.  
123 [4122]):

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ. — Ներ-  
կայումս գրադարանն ունի 800,000 կտոր  
գիրք, որոնք դասաւորուած են հետեւեալ

բաժիններով. Հայ - Ռուս - Թուրք և Քուրդ  
ժողովուրդների, Եւրոպական լեզուների և  
մամուլի բաժին...

Հանրային գրադարանը մեծ թափով  
շարունակում է հարստանալ. նա ձրիա-  
բար ստանում է Խորհրդային միութեան  
մէջ լոյս տեսնող բոլոր գրքերը...

Յաճախումները (ընթերցող) հանրային  
գրադարանի գիտական և զանգուածային  
սրահներում վերջին 4 տարիներում հե-  
տեւեալ պատկերն ունին: 1930 թուին՝  
96,700 հոգի, 1931 թ. 98,880, 1932  
թ. 117,859, 1933 թ. 131,122 հոգի...

Լուսժողովում ընկ. Ն. Ստեփանեանը  
այցելելով գրադարանը... առաջարկել է  
վարչարեան աւելի լայն ծաւալել հայկա-  
կան գրքի մատենագիտութիւնը, տալ յե-  
զափոխութեան տարիների մամուլի պատ-  
կերն, յատուկ ուշադրութիւն դարձնել  
արեւելեան և կովկասեան բաժիններին՝  
որպէս գրադարանի հիմնական օղակի,  
գրադարանի գրականութեան լրիւ ամրոյ-  
նացման համար լայնորէն ծաւալել հրա-  
տարակութիւնների փոխանակումը արտա-  
սահմանի հետ: (Թ. 79 [4087]):

ԹԱՆԳԱՐԱՆ. — Երեւանում վեց թան-  
գարան կայ, նրանց մէջ ամէնից լայն  
ժողովրդականութիւն է վայելում կուլտուր-  
պատմական թանգարանը՝ իր գեղարուես-  
տական, հնագիտական ու... գրական եւն  
բաժիններով:

Այնուհետեւ գալիս են՝ Յեղափոխու-  
թեան թանգարանը, տեխնիկա-տնտեսա-  
կան, բնապատմական, զաւառակաւեւ, ու  
Սեւանի թանգարանները, և վերջապէս  
ժողովմատի կողմից կազմակերպուող ա-  
ռոյնարանակաւ լուսաւորական թանգարա-  
նը: (Թ. 56 [4055]):

— Հ. Ս. Խ. Հ. Կուլտուր-պատմական  
թանգարանը իր գոյութեան կարճատեւ  
շրջանում կարողացել է ձեռք բերել թանգ-  
արժէք ձեռագրերի մի հարուստ ժողո-  
վածու (2000-ից աւելի), որի մէջ գտնուում  
է նաեւ Աբուլ-Ղասիմ Փերզոսու «Շահ-  
նամէ»ի երկու պարսկերէն ձեռագրի օրի-  
նակը: (Թ. 120 [4119]):

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՒԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ. — Թանգարանն ունի հիմնական չորս բաժին՝ գաւառագիտական հնագիտական, կուլտուր-պատմական և գեղարուեստական:...

Գաւառագիտական բաժնում հետաքրքրական են 80-ական թուականների Շիրակի գիւղերում գործածութեան մէջ եղած կահկարասիներն ու գիւղատնտեսական նախնական գործիքները:

Հնագիտական բաժնում հետաքրքրական է մամուտի կմախքը... ուրարտական և

նախուրարտական դարաշրջանից կան ամանեղէններ, տնային գործածութեան իրեղէններ, մանր գործիքներ, զարդեր: Աւելի ուշ դարերից՝ շէնքերի, վանքերի, մատուռների օրինակներ, ռուսական, պարսկական, արաբական և թուրքական հնագոյն զրամների հարուստ հաւաքածոյ:.. Հնագիտական բաժնում եղած՝ ցուցադրուածների զգալի մասը յայտարերուած է Լենինականի նախկին գաւառի մէջ մտնող վայրերում...: (Թ. 213 [4212]):

ՀՈՒՅԵ

### Ն Կ Ա Ր Զ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Շ Խ Ա Ր Հ Է Ն

#### ԶԱՐԵՋ ՄՈՒԹԱՅԵԱՆ

Պր. Զարեջ Մուտայան 1932ին Հոտի մէջ նկարչի չքեղ պտակն ստանալէն յետոյ՝ տարուէ տարի յաղթական վերելք մը ցոյց կու տայ իր արուեստագէտի տաղանդին: 1933ին Միւրնի մէջ գնահատուեցաւ իր ցուցահանդէսը, ոչ միայն հանրութենէն այլ նաեւ հանրածանօթ Կ. Մարքի գեղարուեստագէտ քննադատէն: 1934ին Պեռնի մէջ եղաւ իր երկրորդ յաղթանակը՝ շարք մը չքնաղ նկարներով՝ որոնց մէջ գրած էր այնքան րրքառուն գոյներ և այնքան կեանք: Ահա երրորդ յաղթանակը դարձեալ Զուրիցերիոյ մէջ՝ ի Փընել, ուր՝ Անտրէ Զերմոն՝ արուեստի մեծ քննադատը կը ներկայացնէ զինքը որպէս խոհուն միտք մը և որուն հոգին քնարերգակ՝ լի է ներդաշնակութեամբ լոյսի և զոյնի երգերուն, սրատես և խորաթափանց՝ մինչեւ իրերու էութեան խորը. օժտուած զարմանալի ձիրքով զգալու և տպաւորուելու ամէնէն անտես ու փախուսիկ գեղեցկութենէն:

Մեծապէս ուրախակից ենք Պրն. Զ. Մութայանի այս նոր յաջողութեան՝ որով նոր փաստ մ'ալ կու տայ իր փայլուն ապագային, պատիւ բերելով Ազգիս և Միւրնարեան Ուխտիս որուն խնամքին տակ իր աստղը փայլեցաւ:

#### ՕՐ. ՎԵՐԳԻՆԷ ԿԻՒԼԽԱՍԵԱՆ

Ամերիկահայ Մամուլը վերջերս նկարչութեան ասպարէզին մէջ փայլող տաղանդաւոր օրիորդի մը՝ ՎԵՐԳԻՆԷ ԿԻՒԼԽԱՍԵԱՆԻ անունը հռչակեց: Ազնիւ Օր.ը սկսեալ իր միջնակարգ դպրոցէն ցոյց տուած է մեծ ճաշակ, արուեստի ըմբռնում և ճարտարութիւն:

Գծագրութեան մրցանքի մէջ երկրորդ հանդիսացած, վարժարանը աւարտած է փայլուն յաջողութեամբ և ոսկի մետալով (1930ին): Այժմ կը յաճախէ տեղւոյն՝ Տորչեսթրի Գեղարուեստից բարձրագոյն հաստատութիւնը (Museum of fine Arts): Նաեւ 1934ի ամրան յաջողութիւնը և ոսկի մետալը արդէն գրաւական են վերջնական փայլուն պտակին՝ զոր շերմապէս կը մաղթենք, շնորհաւորելով միանգամայն իր ընտանեկան պարագաներն ու մօտաւոր ազգականները:

Տաղանդաւոր Օրիորդը յիշաւի ոչ միայն պատիւ կը բերէ հայ ազգին, այլ և յատկապէս իրեն հօր՝ Պրն. Խաչատուր Կիւլխասեանի, որ ծանօթ է որպէս քաջ արձանագործ, և իր շնորհալի գաւկին ներշնչած է արուեստի սէրը և նուրբ ճաշակը:

ԽՄԲ.

### Հ. ԵՓՐԵՄ Վ. ԱՊՐՈՅԵԱՆ

(Ծն. Ի ԳԱՂԱՏԻԱ, 21 ՓԵՏՐ. 1869 † Ի Կ. ՊՈԼԻՍ, 8 ՅՈՒՆԻՍԱՐ 1935)



Նոր տարին հաղիւ ոտքը գրած Միւրնարայ սեմին վրայ, կորզեց տարաւ անոր ընտիր որդւոց մին, ի սուգ համակելով եղբայրակցաց և բաղմաթիւ բարեկամաց սրտերը: Հ. Ապրոյեան այն նկարագրերէն էր՝ որոնք սովորականէն աւելի լայն տեղ մը կը գրաւէն ընկերութեան մէջ, և իրենց մեկնումն աւելի մեծ պարագ ու մեծ վիշտ մը կը թողու:

Աշակերտած էր անշուք կրօնաւորի մը, Հ. Մկրտչի Եանուղեանի, որ գրչով անձանօթ, բայց բարոյապէս հարուստ, բարեպաշտ, խոնարհ ու խստակրօն, գիտէր գրոշմել կոչման հոգին ու համոզումը: Եւ Հ. Եփրեմ գիտցաւ փոխարինել կատարելապէս դաստիարակին ներշնչած ուղղութեան:

Երանաւէտ տարիներ անոնք, Ս. Ղազարու անդորրութեան մէջ, լի գոհունակութեամբ, ուրախութեամբ, ուսմանց տենչով, և սիրով մեր նախնեաց պատմութեան, գրականութեան ու լեզուին, որով տոգորուած էր նա և իւր ընկերներս: Մեր գիմաց կանգուն շարուած էին ժամանակի Միւրնարեան մեծագոյն դէմքերը, Ալեշաններ, Զարպէնաւեանք, Քաջունիք, Ճարեաններ, որոնք ընդարձակ գաղափարական մը կը պարզէին մեր առջեւ, և որոց տեսարանը մեծ խրախոյս կը ներշնչէր մեզ: Այդ շրջանին և ազդեցութեան ներքեւ կազմուեցաւ Հ. Եփրեմի միտքն ու սիրտն ալ:

Իւր մտառը տարիներէն գիտցանք դնահատել անոր հոգւոյն բարութիւնն և ազնուութիւնը: Խառնուածով հանդարտ, հաճոյրական ու կատակախօս, գիտէր զուարթ բռնել միշտ մեր փոքրիկ ընկերութիւնը: Եւ բոլոր կենացը մէջ պահեց այդ նկարագիրը, որ իւր կենցաղավարութեան մեծագոյն հրապոյրն հանգիստացաւ ամենուն առջեւ՝ որ ճանչցան զինքը:

Ուղղապէս և ողջամիտ հոգի մը, երբեք չչեղեցաւ իւր ընդգրկած բարոյական սկզբունքներէն՝ թէ լեզուին և թէ ընթացքին մէջ: Անկեղծ և անվերապահ էր իւր համոզումներն յայտնելու մէջ, փարած միշտ հասարակաց բարւոյն, զոր ամէն բանէ վեր կը դնէր: Ունի նամակ մ'ընդարձակ՝ առ խմբագիրն Բաղմալիսի, գրուած իւր գիշերահաս մահուան նախորդ օրն իսկ, գոգցես իւր վերջին կտակը զանազան խնդրոց և իւր գործերու մասին, ուր ինքն իսկ կը վկայէ. « Կեանքիս մէջ խորշած եմ միշտ շողոքորթութենէ, և ջանացած ճերմակին ճերմակ ու սեւին սեւ ըսել »:

Գեղեցիկ օրինակ մ'էր խաղաղասիրութեան, և երբեք չէր վրդովեր սր և է պարագայի մէջ կամ անձի հետ: Եթէ խօսակցութիւն մը սկսէր փոքր ինչ ամպոսիլ, կատակաբանութեամբ իսկոյն կը պարզէր երկինքը, և կը փոխէր խօսակցութեան գոյնն ու զգացումները: Նեղ վայրկեաններու մէջ կը խորհէր, կը մտահոգուէր, կը խօսէր, բայց անձին ու լեզուին տիրապետութիւնը չէր կորսնցնէր, կը պահէր իմաստասիրութիւնը:

Իւր բոլոր միաբանակցաց սիրելի ու հաճելի ապրեցաւ միշտ առանց բացառութեան: Զէր պակտեր ամէն առթիւ գրելու և հաղորդակցելու բոլորին հետ, շնորհաւորելու ամենուն տօները, ցոյց տալով սրտին հմայիչ պարզութիւնը, և պատրաստակամութիւնն եղբայրական ձեռք կարկառելու ամենուն՝ իւր չափով:

Ամբողջ կեանքը նուիրում մ'եղաւ Միաբանութեան օգտին, որոյ գրօշին անխախտ հաւատարմութիւնն իւր անկապուստ պարծանքը մնաց միշտ: Նախ քարտուղար, յետոյ անգամ կեդրոնական վարչութեան, իւր խոհական խորհուրդներով օգտակար հանգիստացաւ հասարակաց բարւոյն: Բայց իւր կենաց մեծագոյն բաժինն ընծայեց ազգիս զաւակաց դաստիարակութեան կարեւոր գործին, նախ ուսումնասիրութեամբ վեհակոյ վարժարանին մէջ. ապա կըթելով ու նուիրելով Միւրնարայ սան՝ օժեալ որդւոց խումբ մը. յետոյ երկար տարիներու համբե-